նորակազմ կառավարութեան շրջաններում։ Դաշնակցական նախարարներ Ա. Սահակեանը, Քաջազնունին ու Խատիսեանը՝ բողոքելով Չխենկելիի ապօրինի վարմունքի դէմ՝ հրաժարական տուին։ Դաշնակցական Փրակցիան պահանջեց հեռացնել Չխենկելիին վարչապետութիւնից։ Նրա արարքը համարւում էր դաւաճանութիւն. անհանդուրժելի էր դաւաճանի վարչապետութիւնը։

Սոցիալ–դեմոկրատական Փրակցիան, երկար խորհրդակցութիւններից յետոյ, Ժորդանիայի ու Ծերեթելիի բերանով, պատասխանեց, որ ինքն ես վրդովուած է պատահածից, դատապարտում է Չխենկելիի վարմունքը, պատրաստ է վերացնել Չխենկելիի թեկնածութիւնը, բայց այդ դէպքում վարչապետութիւնը պէտք է ստանձնէ հայերից մէկը, օրինակ, Քաջազնունին։

Այս առաջարկի անհեթեթութիւնը պարզ էր ամենքի համար։ Ստեղծուած պայմաններում ի՞նչ կարող էր անել հայ վարչապետը։ Նման քայլ միայն կը փութացնէր Անդրկովկասի քայքայումը, և Դաշնակցութիւնը, բնականաբար, հրաժարուեց այդ «պատուից»։ Հանդամանքները ստիպեցին նրան համակերպուել նաև Չխենկելիի վարչապետութեան, որովհետև վրացիները բացէ ի բաց մերժեցին ուրիշի թեկնածութիւնն առաջ քաշել. կա՛մ Չխենկելին, կա՛մ մենք կը հրաժարուենք կառավարութիւն կազմելուց։

Չխենկելին մնաց կառավարութեան գլուխը և շարունակեց սկսած գործը։ Սէյմի որոշման հիման վրա նա մտաւ թիւրքերի հետ նոր բանակցութիւնների մէջ, և, փոխադարձ համաձայնութեամբ, որոշւեց հաշտութեան նոր խորհրդաժողովը նշանակել Բաթումում։ Կազմւեց անդրկովկասեան նոր պատուիրակութիւն, այս անգամ աւելի փոքրաթիւ կազմով։ Պատուիրակութեան մէջ մտան՝ Ա. Չխենկելին՝ նախագահ, Ն. Նիկոլաձէն, Ա. Խատիսեանը, Ց. Քաջազնունին, Մ. Գաջինսկին, Խան–Խոյսկին և մի շարք խորհրդականներ ու քարտուղարներ — զոր. Օդիշելիձէ, զոր. Ղորղանեան, Ռասուլ–Զադէ, Սաֆիքիւրդսկի, Մ. Բունեաթեան, Ս. Վրացեան, Զ. Աւալով և այլն։

Պատուիրակութիւնը Թիֆլիսից մեկնեց մայիս 5–ին*) և յաջորդ օրը, ուշ երեկոյեան, արդէն Բաթումում էր։ Մայիս 11–ին տեղի ունեցաւ Բաթումի խորհրդաժողովի հանդիսաւոր բացումը։

Ներկայ էին անդրկովկասեան պատուիրակութիւնը իր ամբողջ կազմով, թիւրքերի կողմից՝ Խալիլ բէյը, Վեհիբ փաշան, Նուսրէթ բէյը, Օրխան բէյը և այլն, Գերմանիայի կողմից՝ զոր. Ֆոն–Լոսովը, կոմս Շուլենբուրգը և Օ Ֆոն–Վեզենդոնկը։ Նիստի սկզբում դրւեց և Լեռնականների հանրապետութեան մասնակցութեան հարցը, և Հայդար–բէգ Բամմատը ընդունւեց իբրև նրա պատուիրակ։

Ստանձնելով նախագահութիւնը՝ Խալիլ բէյը արտասանեց թիւրքերէն լեզուով մի ճառ, որով ողջունում էր «ազատութեան գեղեցիկ աստղի» ծա–

---

*) Սէյմի ապր. 13–ի օրէնքով ապր. 17 լոյս 18–ի գիշերւանից մտցւեց նոր տոմար, և յետագայ ժամանակագրութիւնը այլևս հաշւած է նոր տոմարով։